

ԲԱՆԿԻ ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Տ. Ս. ՄՈՒՐԱՆՅԱՆ

Բանկի ֆինանսական վիճակը բնութագրող կարևոր ցուցանիշներից մեկը իրացվելիությունն է: Բանկը համարվում է իրացվելի, եթե կարող է միջոցներ ներգրավել ցանկացած պահի, երբ զգացվում է վերջինիս անհրաժեշտությունը: Դա նշանակում է, որ բանկը իր տրամադրության տակ ունի անհրաժեշտ իրացվելի միջոցներ կամ կարող է դրանք արագ ստանալ՝ ներգրավելով միջոցներ և իրացնելով ակտիվներ:

Վիճակագրական տվյալները վկայում են, որ իրացվելիության ոչ բավարար մակարդակը բանկի ֆինանսական վիճակի վատթարացման առաջին նախանշանն է: Այս դեպքում բանկը սկսում է կորցնել իր դեպոզիտների զգալի մասը, որը, բնականաբար, փոքրացնում է կանխիկ դրամական միջոցները՝ իր հերթին ազդելով իրացվելի ակտիվների փոքրացմանը: Իրացվելի միջոցների նկատմամբ բանկի պահանջը կարելի է դիտարկել երկու տեսանկյունից՝ որպես իրացվելիության առաջարկ և սահանջարկ: Այս առումով անհրաժեշտ է պարզել, թե որ գործունեությունն է իրացվելի ակտիվների նկատմամբ պահանջարկ առաջացնում, և բանկը ինչպիսի աղբյուրներ կարող է օգտագործել, երբ իրացվելի միջոցների պահանջ է զգացվում: Մեծ մասամբ բանկերում իրացվելիության խնդիր է առաջանում հետևյալ պատճառներով.

— հաճախորդների հաշիվներից միջոցների նվազման դեպքում,

— վարկառուների կողմից նոր վարկեր ստանալու ժամանակ,

— փոխառությունների մարման և գիվիդենտների վճարման ժամանակ:

Լիկվիդային միջոցների պահանջը բանկը լրացնում է՝ իրականացնելով մի շարք միջոցառումների ծրագրեր՝ նոր ավանդների ներգրավում, տրամադրված վարկերի վերագարձելիություն, մատուցված ծառայությունների դիմաց ստույգված եկամուտների ավելացում:

Իրացվելի միջոցների առաջարկն ու պահանջարկը որոշում են բանկի իրացվելիության աստիճանը՝ «netto liquidity», որը հաշվարկվում է այսպես.

$$L = (H/U + D + V + A) - (T/U - Z - G - Y), \text{ որտեղ՝}$$

ԻԱ-ն իրացվելի միջոցների առաջարկն է,

ԱՄ-ն ավանդներից մուտքերը,

ԾԵ-ն՝ մատուցված ծառայություններից եկամուտները,

ՎՄ-ն՝ վարկերի մարումը,

ԱՎ-ն՝ ակտիվների վաճառքը,

ԻՊ-ն իրացվելի միջոցների պահանջարկն է

ՄՆ-ն հաշիվներից միջոցների նվազումն է

ՎՀ-ն՝ վարկերի ստացման հայտերը,

ԴԾ-ն՝ դեպոզիտների ծախսերը,

ՎԴ-ն՝ վճարված գիվիդենտները:

Բանկային համակարգում իրացվելիության հիմնախնդիրը հիմնականում կապված է հաճախորդների հետ: Իրականում հաճախորդի իրացվելիության հիմնախնդիրը փոխանցվում է սպասարկող բանկին: Եթե ընկերությունը կտրի ունի շրջանառու միջոցների, գիմում է բանկ՝ վարկ ստանալու կամ էլ ներդրած դեպոզիտը վերցնելու համար: Ցանկացած դեպքում բանկին անհրաժեշտ են լրացուցիչ միջոցներ: Նշվածի վառ օրինակն է 1987 թ. համաշխարհային ֆոն-զային ճգնաժամը, երբ ներգրողներն ունեին խոշոր փոխառություններ, ստիպ-

ված էին լրացուցիչ միջոցներ ներգրավել վերցրած վարկային ռեսուրսները վերադարձնելու համար, եւ չդնաժամոր կապիտալի շուկայից տեղափոխվեց բանկեր:

Փորձը ցույց է տալիս, որ բանկերը ժամանակահատվածի որոշակի կտրրվածքում ունենում են իրացվելի միջոցների ավելցուկ կամ պակասորդ: Իմ ամենակարեւոր, իրացվելիության և շահութաբերության միջև առաջանում է երկրորդական, որը ներգրավված միջոցները տեղաբաշխվում են եկամտաբեր ակտիվներում՝ միաժամանակ ունենալով ներգրավված և տեղաբաշխված միջոցների չհավասարակշռված կառուցվածք, բանկի համար մեծանում է իրացվելիության ռիսկը: Հակառակ դեպքում կայուն է իրացվելիությունը, բայց փոքրաճանաչ է բանկի եկամտաբերության աստիճանը: Իրացվելիության հիմնախնդրի լուծումը պահանջում է հեռանկարային վերլուծություն՝ կապված տոկոսային ռիսկի հետ: Եթե տոկոսադրույքները աճում են, բանկի ակտիվների շուկայական արժեքը նվազում է, բանկը տվյալ ժամանակահատվածի համար կարող է ձեռք բերել քիչ քանակությամբ իրացվելի միջոցներ՝ միաժամանակ փոքրաչափ նվազեցնելով եկամուտները: Բացի նշվածից, տոկոսների աճի հետևանքով իրացվելի միջոցների ձեռքբերումը կարող է ավելացնել բանկի ծախսերը՝ առանձին դեպքերում միջոցների ներգրավումը դարձնելով անհնար:

Բանկային գործունեության ընթացքում իրացվելիության հիմնախնդրի առաջնությունը հիմնական պատճառներից մեկն այն է, որ ներգրավված և տեղաբաշխված միջոցների ժամկետային կառուցվածքը հավասարակշռված չէ, որն էլ ստիպանկահատվածի կտրվածքով առաջացնում է իրացվելի միջոցների պակասորդ: Մյուս կարևոր գործոնը բանկի՝ տոկոսների նկատմամբ զգայնության աստիճանն է: Եթե տեղի է ունենում տոկոսադրույքների աճ, որոշ ավանդատուներ լուծարում են բանկի հետ կնքված ավանդային պայմանագրերը՝ նոր, ավելի բարձր տոկոսադրույքներով ներդնելու համար: Բանկի իրացվելիության ռիսկի աստիճանը փոքրացնելու համար անհրաժեշտ է իրականացնել բանկի ակտիվների և պասիվների հավասարակշռված կառավարում: Նման պարագայում կարևորվում է բանկի իրացվելիության համար պատասխանատու մենեջերի աշխատանքը: Վերջինիս հիմնական խնդիրները պետք է լինեն.

— Կադմել հաշվետու ժամանակաշրջանի համար վարկերի և դեպոզիտների ծավալների գրաֆիկ՝ իրացվելիության բնականոն մակարդակ ապահովելու համար,

— Հաշվարկել հաշվետու ժամանակաշրջանի՝ սպասվելիք վարկերի և դեպոզիտների մարման դինամիկան

— Հաշվարկել իրացվելիության մակարդակը հաշվետու ժամանակաշրջանի համար:

Վերը նշված հաշվարկների համար բանկերն օգտագործում են տարբեր մեթոդներ՝ վարկերի և դեպոզիտների ծավալների պլանավորման համար, մասնավորապես.

Սպասվելիք վարկերի ծավալը ֆունկցիա է համախառն ներքին արդյունքի ծավալից, բնկերությունների եռամսյակային եկամուտներից, բանկային վարկերի և արժեթղթերի տոկոսներից և ինֆլյացիայի մակարդակից:

Սպասվելիք ավանդների ծավալը՝ ֆունկցիա է անհատական եկամուտների մոկարդակից, սպասվելիք մանրածախ առևտրի աճի ծավալներից, ավանդների զիմաց ստացվելիք եկամուտներից և ինֆլյացիայի մակարդակից:

Անհրաժեշտ ծավալները պարզելուց հետո պետք է դասակարգել ներգրավված միջոցները.

— Ցայահանջ պարտավորություններ,

— Ոչ հուսալի ավանդներ,

— Կայուն միջոցներ:

Անհրաժեշտ տվյալների միջոցով կարելի է հաշվարկել իրացվելի միջոցների ռեզերվը, որը հաշվարկվում է ախպես.

Ո.95X (ցայահանջ պարտավորություններ—պահուստավորված միջոցներ):

—0.3 X(անկայուն ավանդներ—պահուստավորված միջոցներ)+0.15X(հուսա-
յի ավանդներ—պահուստավորված միջոցներ)։

Ունենալով ձեռքի տակ ավանդներ և նախատեսվող ժամանակաշրջանի համար
ռեալ պլանավորում՝ կարելի է փոքրացնել իրացվելիության ռիսկի աստիճանը,
ապահովելով իրացվելիության կայուն ցուցանիշներ, մասնավորապես.

1. Ավանդների կառուցվածքային հարաբերակցություն—ցածր և բարձր
ապահովվածությունները հարաբերած ժամկետային ավանդներին։ Ցուցանիշը զույգ
է տալիս, ֆինանսական միջոցների կայունության աստիճանը։ Տվյալ ցուցանի-
շի նվազումը վկայում է բանկի ավանդների կայունության և իրացվելի միջոց-
ների պահանջի նվազման մասին։

2. Գրավ դրված արժեթղթերի տեսակարար կշիռը—գրավ դրված արժեթղթ-
յների հարաբերությունը արժեթղթերի պայուսակին։ Ցուցանիշը ցույց է տալիս,
բանկի՝ իրացվելի միջոցներով ապահովության աստիճանը։

3. Դրամական դիրքի գործակից—դրամական միջոցներին ավելացրած ա-
վանդները՝ հարաբերելով բանկի ընդհանուր ակտիվներին։ Տվյալ գործակիցի
մեծությունը ցույց է տալիս, թե բանկը կարո՞ղ է ապահովել կանխիկ դրա-
մական միջոցների պահանջը ժամանակի տվյալ պահին, թե՞ ոչ։ Կանխիկ գրա-
մական միջոցների մեծությունը վկայում է, որ բանկը իրացվելի միջոցների դե-
ֆիցիտ տվյալ պահին չունի։

4. «Հզորություն» օգտագործման գործակից—վարկերին գումարած վար-
ձակալված շենքեր՝ հարաբերած ընդհանուր ակտիվներին։ Ցուցանիշը ցույց է
տալիս իրացվելի միջոցների մոբիլիզացման աստիճանը։

5. «Հուսալիության» գործակից—կարճաժամկետ ներդրումները հարաբե-
րած տոկոսադրույքների նկատմամբ զգայուն պարտավորություններին, որի
ավելացումը վկայում է այն մասին, որ բանկը ամրապնդել է իր գիրքի ֆի-
նանսական շուկայում և փոքրացրել իրացվելիության ռիսկի աստիճանը։ Շուս-
յած այն հանգամանքին, որ բանկերում իրացվելիության հիմնախնդիրը կարող
է առաջանալ ժամանակի ցանկացած պահին՝ կապված տարբեր ռիսկերի փո-
փոխության հետ (շուկայական, կառավարման, տոկոսային), կարելի է խուսա-
փել կտրուկ տատանումներից, եթե բանկում տարվում է իրացվելիության հյու-
սակ և հեռանկարային կառավարում։

Օգտագործելով վերը նշված մեթոդական մոտեցումները և 1998 թ. առա-
ջին եռամսյակին հանրապետության տարածքում գործող խոշոր բանկերի հաշ-
վելիչության տվյալները՝ հաշվարկենք բանկերի ընդհանուր իրացվելիության
աստիճանը՝ բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների սահմա-
նային հարաբերակցությունը¹։

Բանկի անվանումը	Բարձր իրացվելի ակտիվներ (մլն դրամ)	Ընդհանուր ակտիվներ (մլն դրամ)	Իրացվելիու- թյան աստիճանը
Հայնրարտբանկ	6831	30348	40.1
Արդշինբանկ	2098	9830	21.3
Հայադրոբանկ	2552	8169	31.2
Միդլենդ-Արմենիա	6370	12027	52.9
Հայէկոնոմբանկ	1370	5428	25.2
Մեյլաթ	3046	4218	72.2
Կոնվերսբանկ	1524	3082	49.4
Հայսնայրբանկ	1608	3877	41.1

Աղյուսակի տվյալները վկայում են, որ հաշվետու ժամանակաշրջանում
խոշոր բանկերը իրացվելիության հիմնախնդիր չեն ունեցել, իրացվելիության

¹ Տվյալները վերցված են առ 1. IV.1998 թ. բանկերի հրապարակած տվյալներից։

Հայերարտ, Միգլենդ-Արմենիա և Մելլաթ բանկերում նկատվել է իրացվելի միջոցների ավելցուկ, որը վկայում է ֆինանսական շուկայում բանկերի կայունության և հեռանկարային զարգացման մասին: Միաժամանակ, որոշ բանկեր ունեցել են իրացվելիության ցածր մակարդակ, որը պայմանավորված է բարձր ռիսկային զործունեությամբ և ներդրաված ու տեղաբաշխված միջոցների ոչ հավասարաչափ կառավարմամբ:

Հիմնվելով վերը նշված տեսական և դործնական վերլուծության վրա՝ նպատակադրամար կլինեն, որպեսզի բանկերում իրացվելիության խնդիրը դառնար էլ տվելի վերահսկելի և կառավարելի, օգտագործվեն միջազգային պրակտիկայում կիրառվող վերլուծական մեթոդներ:

СТРАТЕГИЯ УПРАВЛЕНИЯ ЛИКВИДНОСТЬЮ БАНКА

Т. С. МУРАДЯН

Резюме

Одним из важных показателей финансового состояния банка является показатель ликвидности. Проблема ликвидности для банков возникает в основном по следующим причинам: уменьшение средств со счетов клиентов, выдача новых кредитов, погашение займов и выдача дивидендов. Методика расчетов для оптимального управления ликвидностью коммерческого банка в комплексе с внешними факторами макроэкономической ситуации (ВВП, прогноз квартальных доходов корпораций, изменение денежной массы, темпы инфляции, сезонные колебания цен) основана на правильном планировании объемов депозитов и кредитов. Такие современные показатели расчета ликвидности, как показатель денежной позиции, коэффициент использования мощностей, а также основные критерии оценки управления ликвидными средствами могут реально отражать текущую ликвидность банка, при этом контролируя и прогнозируя ситуацию. Анализ показателей ликвидности крупных коммерческих банков республики по итогам деятельности I квартала 1998 года показывает, что в отчетном периоде банка не имели проблем, связанных с ликвидностью.